

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՓՈՐՉԵԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԻՇԽՆԵՐԸ

Պրօֆ. Երևան Մէջմանի «Դասախոսութիւններ փորձ-նական մանկավարժութեան մասին» դրբից

Չառունակութիւն

Երեխայի կամքի ձեւկան կողմի զարդացումը կարեռ
է նրա տպագոյ կեանքի համար։ Ընդհանրապէս թէ ձնո-
ղի, թէ ուսուցչի և թէ դաստիարակի համար անհրա-
ժեշտ է մանուկին ներշնչել հաւատ, սուլծել վոխադարձ
վստահութիւն։ Երբ այս պայմանները բացակայում են,
աշակերտը դադարում է սովորելուց։ «Լզբում» նրա յա-
ռաջադիմութիւնը թուլանում է այդ ուսուցչի առարկայի
նկատմամբ, յետոյ էլ մնացած բոլոր առարկաների նկատ-
մամբ։ Երբ Երեխան կորցնում է իւր վստահութիւնը դէպի
ինքը, դէպի դաստուն։ Նրա կամեցողական կեանքը մի
տեսակ կանգ է առնամ և կարող է մանուկը մեծ վնաս-
ներ տտանալ այդ բանից։ Յատկապէս այս վտանգին են-
թակայ են գիւրագրգիռ բնաւորութիւնները, որոնք շատ
են ընկճւում։ Ոչ թէ մտաւոր ընդունակութիւնն է մար-
դուն կեանքի համար օգտակար դարձնում, այլ նրա կամքի
յատկութիւնները, ոյժը և նրբութիւնը։ այն մարդը, որը
ուժեղ կամք ունի և վճռում է մի բանի հասնել, նա կա-
րողանում է այսպիսով իւր կեանքը, բախտն էլ որոշել։

Այս տեսակէտից կարեռ նշանակութիւն ունի ու-
սուցչի անձնաւորութիւնը, որովհետեւ նա մանուկին կա-
րող է ներշնչել և լաւը և վատը։ կարող է նրան խրա-
խուսել և զարդացումը տեալ տանել, կարող է նու իւր
տգիտութեան, անփորձութեան պատճառով խանգարել
այդ զարդացումը։ Երեխաների ներշնչման ենթակայ լի-
նելը տարբեր է լինում, այդ կապուած է հասակի, սեռի
և անհատականութեան հետ։ Արտաքին կեանքի պայման-

ներն էլ յաճախ աղդում են մանուկի կամքի զարգացմանը, կամ խանգարում են կամ նպաստում։ Անհրաժեշտ մանկավարժական սլահանջ է մանուկին վարժեցնել վատ ներշնչութերին դիմադրելուն։ ուստի զլիաւոր միջոցն է մանուկի մէջ իւր վերաբերմամբ վստահութիւն զարգացնել։

Դպրոցում ամեն առարկայի ուսուցման գէպրում էլ մանուկի մէջ պէտք է կամքի ձևական կողմը զարգացնել, ամեն ինչ, որ արւում է, պէտք է կատարէ այն գիտակցութեամբ, թէ այդ իւր պարտքն է, պէտք է աշխատանքը կատարէ կանոնաւոր, բարեխղճօրէն և ազնիւ կերպով։ Իւր ընկերների հետ վարուելիս նրա մէջ պէտք է երկեն համակրանքի և հասարակական զգացութները։ Դասարանում իրեն սլահելը, իւր յարաբերութիւնը գէպի ուսուցիչը նրա մէջ պէտք է զարթեցնեն պարտականութեան զգացումը։ Դպրոցում աւանդուած նիւթերն էլ մեծ նշանակութիւն ունին այս գէպրում։ լաւ նիւթի շնորհիւ մանուկի գիտողութիւնը զարգանում է, նրա մէջ իդէալներ են երկում։ Նիւթը նրա առաջ նպատակներ է դնում։ Մանուկի բարոյական գործողութիւններն էլ առժամայն լինում են աւելի ընազդի, քան գիտակցութեան արդիւնք։ սակայն միայն բարոյական օրինակներ տալը, նմանութեան նիւթ մատակարարելը մանուկին կարող են մնանալ, նա ոչ կարող է լսածը իւրացնել կանոնաւոր կերպով և ոչ էլ հնարաւորութիւն ունի ուղիղ գործադրելու գիտեցածը։ կամքը կարող է զարգանալ մասամբ անկախ մարմնական առողջութիւնից։ կան մարդիկ, որոնց բարոյական կամեցոզութիւնը խիստ զարգացած է, իսկ իրենք ֆիզիքապէսթոյլ են և ընդհակառակ։ Անգլիական դպրոցներում յատուկ ու շադրութիւն են դարձնում մարմնամարդութեան ու խաղերի վերայ, որ այդպիսով մանուկի բարոյական կողմն էլ զարգացնեն, բայց դեռ պարզ չէ հոգեկանի և մարմնականի կապը այս խնդրում։ պարզ չէ, թէ ուսպիսի ջղերի զարգացումը և ինչ ձեռք օգտակար կարող են լինել ներքին զարգացման համար։ Հարկաւոր է նկատել, որ ընդհանրապէս բարոյական դաստիարակութիւնը աւելի ան-

Հատական ընոյթ ունի, քան մտաւորը և դժուար է այս խնդիրը մի ընդհանուր համակարգութեան տակ դնել։ Ամենից կարևոր է ուսումնասիրել երեխաների անհատական կողմերը և ըստ այնմ դաստիարակութեան գործը տռաջ տանել։

VII.

Երեխանիրի մէջ եղած անհատական սարքերութիւնների հետազոտութիւն։

Անհատական տարբերութիւնների ուսումնասիրութեան նպատակն է բացատրել անհատական տարբերութիւնների ծագումը՝ ցոյց տալով մարդու հոգեկան կերպի տարբական երեխանիրի ծագումը։ Այս նպատակը իրազ ործելու համար ահճատժեշտ է՝ 1) նկարագրել և դասերի բաժանել մարդկանց մէջ եղած տարբերութիւնները։ 2) վերլուծական եղանակով վերածել այդ տարբերութիւնները տարրական մտուերի 3) համազրական եղանակով այդ տարբերից կազմել փաստօրէն գոյութիւն ունեցող տարբերութիւնները։ Մանկավարժի համար այդ տարբերութիւնների հետ ծանօթանալը անհրաժեշտ է, որովհետեւ այս հանգամանքի շնորհիւ է նա պարզում այն ելակետը, որից բղիւելու է իւր երեխաների հետ վարուելու եղանակը։ Անհատական տարբերութիւնները ուսումնասիրելու նպատակն է ամենից առաջ որոշել, թէ ինչ ձեռվից ցուցումները, դիտազութիւնները մէկը միւսից տարբերում են, որովհետեւ այս տարբերութիւնները ոչ թէ, նախկին հոգեբանների կարծիքի համաձայն, սխալներ են, այլ հէնց անհատական տարբերութիւններ։ Կրէպէլինը աշխատում էր գտնել անհատների հիմնական այն յատկութիւնները, որոնց չափելը հնարաւոր է, իւր հետազոտութիւնից նա հանում է հետեւեալ եղբակացութիւնը՝ առաջին հիմնական տարբերութիւնը ժամանակի տարբերութիւնն է, հոգեկան աշխատանքի արագութիւնն է։ 1) զդայարաններից ստացած գրգիւների արագութիւնը։ 2) զուգորդութիւնների և վերաբարդութիւնների արագութիւն։ 3) կամեցողական

շարժումների արագութիւն. այս միջոցներով հնարաւոր է իմանալ, որքան մէկը շուտ է ստանում գրգիռ, որքան ընդունակ է զուգորդելու և այլն. այս զէպքում՝ լինում են զանգաղ և արագ կատարողներ. հետեւապէս տարրերւում են անհատապէս Երկրորդը՝ վարժութիւնն է. մեր հոգեկան ամրող գործունէութիւնը ենթակայ է վարժութեան, կոտարելագործման և ուժեղացման. շնորհիւ վարժութեան մեր հոգեկան աշխատանքը մերենայական բնոյթ է ստանում: Երրորդ տարրերութիւնը ձեռք բերածի ամուր պահելն է. ոմանք վարժութեան միջոցով ձեռք բերած կարողութիւնը չուտ են կորցնում, ոմանք ուշ. այս յատկութիւնը կոչւում է ընդհանուր յիշողութեան: Զորբորդը՝ յիշողութեան մասնաւոր տեսակների աշխատաթեան ընդունակութիւնն է. որքան մեծ է մեր ստացած տպաւութիւնների թիւը, որոնք մեր յիշողութեան մէջ պահեում են, այնքան ուրեմն յիշողութեան յտառի տեսակները աշխատանքի տևելի ընդունակ են. Հինգերորդն է դիւզգայութիւնը. շատերը հեշտութեամբ ձեռք են բերում աշխատելու ընդունակութիւն, ուրիշների համար անհրաժեշտ է երկար վարժութիւն: Աեցերորդն է՝ յուղածութիւնը, ոմանք շուտ են յոդնում, ուրիշները երկար աշխատելու ընդունակ են. միայն վերջը երկում է, որ աշխատանքի քանակը քշանում է, իսկ որակը մեծանում: Եօթներորդն է՝ ոյժերի վերականգնումն. շատերը յոդնելուց յետոյ գժուարութեամբ են ոյժերը վերականգնում, կան և այնպիսիները, որոնք միքիչ հանգստանալուց յետոյ նորից եռանգուն աշխատանքի են կալչում: Աւթերորդն է քնի խորութիւնը. ոմանք խոր քուն ունեն, ոմանք ոչ. քունը ոյժերը վերականգնելու ամենալաւ միջոցն է: Իններորդն է ցրուածութիւնը, սրա հակառակն է խանդարող աղդեցութիւններին դիմագրելու ընդունակութիւնը: Տասերորդն է մի բանին ընտելանալը. օրինակ որքան մի մարդ ընդունակ է խանդարող տպաւորութիւններին վարժուելու և իւր գործը կանոնաւոր կերպով շարունակելու: Այս տարբերութիւնները մի ընդհանուր կապող գին չունեն:

Այն եռանդը, որ երկում է որ մեր հոգեկան ու մարմարական դործողութիւնների մէջ ժամանակի ընթացքում հաւասար չափով չի երկան դալի. նա պարբեռաբար հասնում է որոշ առաւելագոյն ու նուազագոյն աստիճանների. այս երկոյթը ընդհանուր է և անհատական տարբերութիւնների ենթակայ. Եռանդի ընդհանուր ընթացքը նոյն պայմաններում ապրող մարդկանց համար հետեւալն է. առաւօտը, քնից անմիջապէս ելնելուց յետոյ եռանդը համեմատաբար դեռ թոյլ է լինում. այնուհետեւ հասնում է իւր առաջին առաւելագոյն աստիճանին, ճաշից առաջ նա հասնում է իւր առաջին նուազագոյն աստիճանին, ճաշից յետոյ հասնում է իւր երկրորդ առաւելագոյնին, երեկոյեան՝ երկրորդ նուազագոյնին. Իրու կարեռ անհատական տարբեռութիւններ պէտք է յիշել, որ կան մարդիկ, որոնք կամ ըստ մեծի ժամկին առաւօտներն են աշխատում կամ երեկոները. առաջինները աշխատելու ամենամեծ ընդունակութիւնը ձեռք են բերում մինչեւ կէսօր, երկրորդները՝ երեկոյեան՝ Դիշերուայ քունը ըստ երեսյթին կազ ունի ցերեկուայ աշխատանքի հետ. նրանք, որոնք լաւ աշխատում են առաւօտները, պարապելուց յետոյ շուտով քնում են, իսկ առաւօտեան գէմ նրանց քունը թեթի է լինում. իսկ երեկոները աշխատողները պարկելուց յետոյ ուշ են քնում, խոր քուն ունենում են առաւօտեան գէմ. Դատողութեան տեսակէտից նկատում է հետևեալ տարբեռութիւնը. վճռական, ինքնավատահ ու ներշնչող գատողութիւններ. Առ այժմ այս ուղղութեամբ կատարուած ուսումնասիրութիւնների մէջ որոշ կապ չկայ. բացի այդ ուսումնասիրած տարբեռութիւնները մի ընդհանուր, պարզ հիմքի չեն վերածուած. տարբերութիւնները դեռ համագրական վերլուծման չեն ենթարկուած, ուստի և որոշ չեն, թէ գրանց մէջ ինչ կազ կայ.

VIII

Օժուած լինելու գիտական տեսութեան հիմքերը.

Ընդհանրապէս հասակաւորների և մասնաւորապէս երեխանների օժտուած լինելը գիտական հետազոտութեան նիւթ դարձրել են միայն ներկայ հոգերանները։ Հասակաւորների օժտուած լինելու ընդհանուր ուսումը մանկավարժական տեսակէտից երկրորդական արժէք ունի, որովհետեւ հասակաւորների օժտուած լինելու տարբերութիւնները երեխանների ունեցած աարբերութիւնների հետ համեմատած առաջ է դալի նրանց հոգեկան զարդացումից, որը կատարւում է դպրոցից դուրս։ Հասակաւորների ընդունակութիւնների ուսումնասիրութեան ժամանակ այլ հարցեր են շօշափում, իոկ մանուկների ընդունակութիւնների հետազոտութեան դէպլում – այլ մանկավարժութեան տեսակէտից վերջինը կարեռ է, ուստի և հասակաւորների մասին խօսք չի լինի։

Օժտուած լինելը զանազան կերպ են հասկանում։ ումանք ի ծնէ ունեցած բարձր ընդունակութիւններն են համարում օժտուած լինելը, ումանք՝ ձեռք բերածները, ումանք՝ երկուսի միասին գործադրելը։ Ընդհանուրը այս բռնորդի մէջ այն է, որ օժտուած լինելը վերաբերում է հոգեկան կեանքի մտաւորական մասին և, որ զլսաւորն է, անհատական ձևն աւելի ենք ի նկատի ունենում։ Որևէ մէկի օժտուած լինելը ուսումնասիրներու համար հարկաւոր է նրա մտաւոր ընդունակութիւնների անհատական ձևերը ուսումնասիրել, նրանց ծագումը որոշել։ Հետազոտութեան դէպլում ոչ միայն հոգեկան տարբերութիւններն են ի նկատի առնեում, այլ և ֆիզիքականները։ Մանուկներին հետազոտելու դէպլում հարկաւոր է ոչ միայն նրանց ընդունակութիւնների զարդացումն ևս հետազոտել, այլ և երկու սեռերին համեմատել միմեանց հետ։

Դպրոցում ոռվարաբար աշակերտի ընդունակութիւնները չափուում են նրա արած յառաջադիմութեամբ։ ով

մի առարկայից յառաջադիմում է, նա ընդունակ է համարւում. սակայն ընդհանրապէս գնահատութեան գէպրում աշակերտի հոգեկան ընդունակութիւնը բազմակողմանի ինկատի չեն առնում. գպրոցում աւանդում են միայն որոշ ընդունակութիւններ պահանջող գիտութիւններ. իսկ երեխայի մնացած ընդունակութիւնները մնում անուշադիր. այդ պատճառով գպրոցում ծոյլ ճանաչուած աշակերտը ապագայում զարմանալի յառաջադիմութիւն է ցոյց տալի, որովհետեւ իւր ընդունակութիւնների համապատասխան դործով է զբազւում. Կարեոր է վճռել այն խնդիրը՝ թէ արդեօք հնարաւոր է կրթութեան ու գառտիարակութեան որոշ ծրադրով զարդացնել, և ինչ յարաբերութիւն կայ ընդունակութեան և յառաջադիմութեան մէջ. Այս հարցի վճռի հետեանքը այն կարող է լինել, որ կամ պէտք է աշակերտներին առանձին, առանձին ուսումնասիրել և կրթութիւնը անհատականացնել կամ պէտք է աշխատել աշակերտներին ընդհանրապէս հաւասարացնել, առանց ի նկատի ունենալու մէկի պակասաւոր կողմը՝ հասկանալի է, որ քանի դեռ ուսումը դաստիանական է, աշակերտները խմբով են նստում և պատմում, միակողմանի անհատականացում մոցնելը և գժուար է և վտանգաւոր. Եթէ ուսուցիչը մի աշակերտով զբաղուի, միւսները կը տուժեն, ընդհանուր աւանդման մեթոդ չի կարելի դործադրել. այնուամենայնիւ ուսուցիչը պէտք է ի նկատի ունենայ, որ աշակերտների ընդունակութիւնների մէջ որոշ տարբերութիւններ կան, որոնք խոր արմատ ունին։

Որոշ ընդունակութիւնների տէր աշակերտներին ի մի համախմբելու գէպրում հարկաւոր է ի նկատի ունենալ խնդրի ոչ միայն հոգեբանական կողմը, այլ և տնտեսական ու սօցիալական. Մանկավարժական տեսակէտից փորձով պէտք է համոզուել ինչպիսի աղդեցութիւն է ունենում աշակերտների վրայ տարբեր ընդունակութիւններով երեխաների խառն նստելը, որ աստիճանի պէտք է լինի խառնուրդը, որ օդտակար լինի և ընդունակների և անընդունակների համար։

(շարունակելի)

Pessimist.

